ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.07.2024թ.

ք.Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ դատավոր Ս. Երիցյանի

քննության առնելով քաղաքացիական գործն ըստ հայցի <<ՄՏԿ>> ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ <<№092/GArm/24_4.3_096/04.03.24>> ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների հայտերը տրամադրել պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Հայցվորի ներկայացուցիչը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի՝ <<№092/GArm/24_4.3_096/04.03.24>> ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների հայտերը տրամադրել պարտավորեցնելու պահանջի մասին:

Հայցադիմումը էլեկտրոնային համակարգով ներկայացվել է 29.03.2024 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/2284/02/24 քաղաքացիական գործը, որը 29.03.2024 թվականին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Բաղիրյանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /դատավոր Ա. Բաղիրյան/ 08.04.2024 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Թիվ ԵԴ2/2284/02/24 քաղաքացիական գործը 22.05.2024 թվականին վերամակագրվել է դատավոր Ս. Երիցյանին:

Դատարանի 27.05.2024 թվականի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և գործի քննությունը սկսվել է սկզբից:

Դատարանը 24.06.2024 թվականին որոշում է կայացրել թիվ ԵԴ2/2284/02/24 քաղաքացիական գործը քննել գրավոր ընթացակարգով և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 10.07.2024 թվականին՝ հրապարակելով դատական իշխանության պաշտոնական կայքում:

Հայցվորի ներկայացուցչի կողմից 01.07.2024 թվականին դիմում է ներկայացրել դատարան՝ հայցից հրաժարվելու մասին:

2. Հայցադիմումի հիմքերը, հայցվորի փաստարկները և պահանջը

Հայցվորի ներկայացուցիչը, դիմելով դատարան, հայտնել է, որ <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի կարիքների համար գազի ճնշման կարգավորիչների ձեռքբերման նպատակով 07.03.2024թ. <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող) կողմից հայտարարվել է <<№092/GArm/24_4.3_096/04.03.24>> ծածկագրով մրցակցային ընտրությունը (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Տվյալ Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև Հայցվոր՝ <<ՄՏԿ>> ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Հայցվոր):

<<№092/GArm/24_4.3_096/04.03.24>> ծածկագրով մրցակցային ընտրության գնահատող հանձնաժողովի 2024 թվականի մարտի 18-ի թիվ 23 արձանագրությամբ <<Գազ Մոնդո>> ՍՊԸ-ն հայտարարվել է №092/GArm/24_4.3_096/04.03.24 ծածկագրով մրցակցային ընտրության ընտրված մասնակից:

18.03.2024թ. <<ՄՏԿ>> ՓԲԸ-ն դիմել է <<№092/GArm/24_4.3_096/04.03.24>> ծածկագրով մրցակցային ընտրության գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով անհապաղ տրամադրել <<№092/GArm/24_4.3_096/04.03.24>> ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների հայտերը:

Ի պատասխան <<ՄՏԿ>> ՓԲԸ-ի 18.03.2024թ. դիմումին՝ <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ն 20.03.2024թ. թիվ 13211147-2024 գրությամբ հայտնել է, որ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի դրույթների հիման վրա <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի կողմից հաստատված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումների մասին կարգով նախատեսված չէ գնումների գործընթացի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերի տրամադրում որևէ անձի, ուստի այլ անձանց վերաբերող՝ հայցվող տեղեկատվությունը չի կարող տրամադրվել առանց այդ անձանց համաձայնության:

Գտնում են, որ Պատասխանողի կողմից հայցված տեղեկատվությունը չտրամադրելը անօրինական է, խախտում է ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով, և այլ իրավական ակտերով սահմանված Հայցվորի իրավունքներն ու ազատությունները, այդ թվում տեղեկատվություն ստանալու իրավունքը, ուստի օգտվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի դրույթներից, որի համաձայն յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմելու դատարան՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար, ներկայացնում ենք սույն հայցադիմումը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է գնումների գործընթացի այնպիսի կարևորագույն սկզբունքներ, ինչպիսինն են գնման գործընթացի թափանցիկ և հրապարակային կազմակերպումը:

Գնումների հրարակայաին և թափանցիկ կազմակերպումը ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգ>>-ի 32-րդ կետի 4-րդ ենթակետը հստակ սահմանում է, որ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին:

Սակայն չնայած գնումների մասին ՀՀ օրենսդրական վերոհիշյալ պահանջների՝ <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ն Ընթացակարգի մասնակից՝ <<ՄՏԿ>> ՓԲԸ-ի դիմումի հիման վրա հրաժավել է տրամադրել <<№092/GArm/24_4.3_096/04.03.24>> ծածկագրով մրցակցային ընտրության մասնակիցների հայտերի վերաբերյալ տեղեկատվությունը, այն է՝ մասնակիցների հայտերի փաստաթղթերի պատճենները այն հիմնավորմամբ, որ <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի կողմից հաստատված ապրանքների,

աշխատանքների, ծառայությունների գնումների մասին կարգով նախատեսված չէ գնումների գործընթացի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերի տրամադրում որևէ անձի, ուստի այլ անձանց վերաբերող՝ հայցվող տեղեկատվությունը չի կարող տրամադրվել առանց այդ անձանց համաձայնության:

Այս կապակցությամբ Դատարանին խնդրում են նկատի ունենալ, որ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնումների կազմակերպման սկզբունքները պարտադիր են բոլոր հանրային կազմակերպությունների, այդ թվում նաև <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի համար՝ որպես հանրային կազմակերպություն հանդիսացող կառույց, և նման պարագայում, եթե Պատասխանողը հրաժարվում է տրամադրել Ընթացակարգի մասնակիցների հայտերը, ապա դրանով իսկ խախտում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնման գործընթացի թափանցիկ և հրապարակային կազմակերպման սկզբունքները, քանի որ վերոհիշյալ սկզբունքի ապահովման երաշխիքներից մեկը ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգ>>-ի 32-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջն է, այն է՝ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի պատճենները հանձնաժողովի քարտուղարի կողմից անհապաղ տրամադրումը՝ նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին:

Համապատասխանաբար, եթե <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի կողմից գնման ընթացակարգերի մասնակցի դիմումի հիման վրա գնման ընթացակարգով չի տրամադրվում մյուս մասնակիցների հայտերը, ապա վերոհիշյալի արդյունքում հնարավոր չի լինում ուսումնասիրել հայտի փաստաթղթերը, իսկ անհամապատասխանություն հայտնաբերելիս՝ դատական կարգով բողոքարկել գնահատող հանձնաժողովի որոշումները՝ նման հայտերը բավարար գնահատելու վերաբերյալ:

Վերոհիշյալի արդյունքում, ըստ էության, <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ն կարող է իր գնումների ընթացակարգերում դրսևորել ցանկացած վարքագիծ, բավարար գնահատել ցանկացած մասնակցի հայտ՝ ցանկացած փաստաթղթերի հիման վրա, քանի որ չկատարելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները և ըստ էության, գաղտնիության ռեժիմով անցկացնելով իր գնման ընթացակարգերը՝ խուսափում է հանրային վերահսկությունից՝ այդ վերահսկողությունն իրականացնելու անհնարինության պայմաններում: Դրանով իսկ խախտվում է նաև ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը և համապատասխանաբար, գնման ընթացակարգի մասնակիցների իրավունքը դատական կարգով բողոքարկելու գնահատող հանձնաժողովի որոշումները:

Վերոհիշյալը իր հերթին հանգեցնում է <<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի, ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին

մասի, ինչպես նաև <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջների խախտմանը:

Դատարանին խնդրում են նկատի ունենալ, որ այս խնդրի մասին առկա են բազմաթիվ ԶԼՄՆ-ների հրապարակումներ, ըստ որի նման վարքագիծ դրսևորելով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ն ամեն կերպ փորձում է զերծ մնալ հանրային հսկողությունից (այդ մասին հետևյալ հղումներով՝ https://hraparak.am/post/e88fd1b293675d49a7727ac914b3a8f3, https://www.24news.am/news/334314, https://www.araratnews.am/show/108632, կցվում են):

Գտնում են, որ վերոհիշյալով հիմնավորվում է, որ Պատասխանողը պարտավոր էր Հայցվորին տրամադրել վերջինիս կողմից պահանջված տեղեկատվությունը, հետևաբար այդ պահանջը մերժելիս՝ թույլ է տրվել վերոնշյալ իրավական նորմերի պահանջների խախտում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատասխանողը հրաժարվել է հայցված տեղեկատվությունը տրամադրելուց, ուստի ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության 3-րդ, 120-րդ, 121-րդ և 122-րդ հոդվածներով, խնդրում են պարտավորեցնել <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին տրամադրել <<ՄՏԿ>> ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գ.Խաչատրյանի 18.03.2024թ. դիմումով հայցվող հետևյալ տեղեկատվությունը, այն է՝ <<№092/GArm/24_4.3_096/04.03.24>> ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների հայտերը:

Հայցվորի ներկայացուցիչը 01.07.2024 թվականին միջնորդության է ներկայացրել դատարան և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի և 182-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջները՝ դատարանին հայտնել է, որ <<ՄՏԿ>> ՓԲԸ-ն հրաժարվում է <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված №092/GArm/24_4.3_096/04.03.24 ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների հայտերը տրամադրել պարտավորեցնելու պահանջի մասով թիվ ԵԴ2/2284/02/24 քաղաքացիական գործով <<ՄՏԿ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայցից և խնդրում այդ հիմքով կարճել թիվ ԵԴ2/2284/02/24 քաղաքացիական գործը:

<u>3.Պատասխանողի դիրքորոշումը</u>

Պատասխանողի ներկայացուցիչը, ներկայացված հայցադիմումի պատասխանով, հայտնել է, որ ամբողջությամբ առարկում է հայցադիմումում ներկայացված պահանջի դեմ՝ ներկայացնելով հայցի փաստական հիմքերի վերաբերյալ հետևյալ դիրքորոշումը և սույն պատասխանի (առարկությունների) հիմքում դրված փաստերը.

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 7-րդ բաժնի դրույթներով հանրային

կազմակերպությունների համար սահմանվել են գնումների կատարման առանձնահատկություններ, մասնավորապես՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հանրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ կազմակերպությունների հաստատած գնումների կատարման կարգերով:>>:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2 կետի <<ա>> ենթակետի համաձայն՝ հանրային կազմակերպություններ՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաստատած ցանկում ներառված անձինք, որոնք գործունեություն են իրականացնում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում, բացառությամբ այն անձանց, որոնք նույն պարբերության մեջ նշված ցանկում ներառվել են էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում հանրային ցանցի շահագործման շրջանակում մատուցվող ծառայությունների մասով գերիշխող դիրք ունենալու հանգամանքով պայմանավորված:

<<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ն հանդիսանում է հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող անձ և ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 19 օգոստոսի 2020թ. N 273Ա որոշմամբ (նշված որոշումը հրապարակված է Հանձնաժողովի www.psrc.am պաշտոնական կայքում) հաստատված համապատասխան ցանկում:

<<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ իրականացվող գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Ընկերության 16.02.2024թ. N 27 հրամանով հաստատված <<Գազպրոմ Արմենիա> ՓԲԸ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումների մասին կարգով (այսուհետ՝ Կարգ), որը մշակված է Հայաստանի Հանրապետության սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, <<<Հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու, այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջները, դրանց մոնիթորինգի և հաշվետվությունների ներկայացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> Հանձնաժողովի 19 օգոստոսի 2020թ. N 273Ա որոշման, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների և նորմատիվ իրավական ակտերի, գնումների ոլորտում համաշխարհային պրակտիկայում ընդունված համընդհանուր կանոնների հիման վրա, ինչպես նաև <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ միակ բաժնետիրոջ՝ <<Գազպրոմ>> ՀԲԸ (ՌԴ) Տնօրենների խորհրդի 19.10.2018թ. N3168 որոշմամբ հաստատված <<Գազպրոմ>> ՀԲԸ և Գազպրոմ Ընկերությունների Խմբի ապրանքների, աշխատանքների,

ծառայությունների գնումների մասին կարգի հիման վրա:

Հայցվորի կողմից վկայակոչված ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 1-ին կետի համաձայն՝ սույն կարգով կարգավորվում են <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրերի հաստատման, գնումների նախնական հսկողության, պայմանագրերի կատարման, կառավարման և ֆինանսավորման, գնահատող հանձնաժողովի կազմավորման և գործունեության, օրենքով նախատեսված գնում կատարելու ընթացակարգերի կիրարկման կարգի և դրանց առանձնահատկությունների հետ կապված հարաբերությունները, սահմանվում է

<<փոխկապակցված անձինք>> հասկացությունը, փոխկապակցված անձանց կողմից գնման ընթացակարգերին մասնակցության սահմանափակման դեպքերը, ինչպես նաև հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները:

Հայցվորի կողմից վկայակոչված ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> դրույթներով նախատեսված չէ, որ այդ կարգը կիրառելի է հանրային կազմակերպությունների նկատմամբ, ավելին՝ <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> III-րդ գլխով (5-15 կետերով) նախատեսված են Գնման գործընթացի պատասխանատուների մասին կարգավորումներ և այդ կարգավորումները չեն նախատեսում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի իմաստով <<հանրային կազմակերպությունների>> կողմից անցկացվող գնման գործընթացների պատասխանատուներ, ինչի հաշվառմամբ կարելի է միանշանակ եզրահանգել, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> դրույթները կիրառելի չեն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի իմաստով <<հանրային կազմակերպությունների>> նկատմամբ:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը>> կիրառելի չէ հանրային կազմակերպությունների կազմակերպված գնումների նկատմամբ և սույն գործով ներկայացված հայցադիմումում վկայակոչված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> դրույթները, ի սկզբանե, ենթակա չէին կիրառման Պատասխանող ընկերության կազմակերպված գնումների ընթացքում, հաշվի առնելով այն, որ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն Պատասխանողի (հանրային կազմակերպության) կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Պատասխանողի հաստատած գնումների կատարման կարգով: Հանրային կազմակերպությունների կողմից կազմակերպվող գնումներն իրականացվում են բացառապես այդ կազմակերպությունների հաստատած գնումների կատարման կարգերով,

որոնց նկատմամբ պահանջները սահմանված են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով:

<<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ Կարգը չի նախատեսում գնման գործընթացի մասնակիցների պահանջով մյուս մասնակիցների հայտերը տրամադրելու <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ պարտավորություն:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գնման գործընթացի թափանցիկության ու հրապարակային կազմակերպման սկզբունքներն ապահովվում են մրցակցային ընտրության ծանուցումը (հրավերը), մրցակցային ընտրությանն առնչվող հայտարարությունները ինչպես <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ կայքում, այնպես էլ www.gnumner.minfin.am կայքում հրապարակելով: Այլ կերպ ասած՝ գնման գործընթացի հնարավոր մասնակիցները հնարավորություն ունեն նախապես տեղեկանալ նախատեսվող գնման գործընթացի, ինչպես նաև դրա ընթացքի մասին հետևելով վերոնշյալ կայքերին:

Ինչ վերաբերում է գնման գործընթացի բոլոր մասնակիցների հայտերը Հայցվորին տրամադրելուն, ապա նշեն, որ մասնակիցները, ի թիվս այլի հայտով ներկայացնում են նաև տեղեկատվություն սեփականատերերի, ներառյալ շահառուների (այդ թվում՝ վերջնական) շղթայի մասին, որը ներառում է անձնական տվյալներ:

<<Անձնական տվյալների պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալ՝ ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:

<<Անձնական տվյալների պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի ուժով անձնական տվյալները ենթակա չեն տրամադրման երրորդ անձանց առանց տվյալների սուբյեկտի համաձայնության: Այդ մասին նշվել է 20.03.2024թ. N 132/1147-2024 գրությամբ:

Բացի դրանից հարկ է նշել, որ գնման գործընթացի մասնակիցների հայտերը հնարավոր է պարունակեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածով նախատեսված՝ ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք, ուստի Պատասխանողի կարծիքով, Պատասխանողն իրավասու չէ տրամադրելու երրորդ անձանց վերաբերող տեղեկատվությունն առանց այդ անձանց համաձայնության, նկատի ունենալով, որ ինչպես վերը նշվեց, ոչ օրենսդրությամբ, ոչ Կարգի համաձայն նման պարտավորություն Պատասխանողի համար նախատեսված չէ:

Վերոգրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով, որ սույն գործով դատական ակտը կարող է անխուսափելիորեն ազդել հայտ ներկայացրած անձանց իրավունքների և պարտականությունների վրա (քանի որ պարզ չէ, թե ինչ հետևանքներ է ունենալու սույն գործով պահանջվող տեղեկատվության

հնարավոր տրամադրումը Հայցվոր կողմին և ինչպես կօգտագործի Հայցվորը իր մրցակցին վերաբերող տեղեկատվությունը) Պատասխանողը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով գտնում է, որ այդ անձանց (հայտեր ներկայացնողներին) անհրաժեշտ է ծանուցել որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ներգրավվելու նրանց իրավունքի և դրա իրականացման կարգի վերաբերյալ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ն կից ներկայացնում է <<№092/GArm/24_4.3_096/04.03.24>> ծածկագրով մրցակցային ընտրությանը վերաբերող փաստաթղթերն այն ծավալով, որն, Ընկերության կարծիքով, չի կարող առնչվել սույն գործով Հայցվորի մրցակից կազմակերպության գաղտնիքին և նրա ղեկավարության /մասնակիցների/ անձնական տվյալներին:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածով, խնդրում են թիվ ԵԴ2/2284/02/24 քաղաքացիական գործով <<ՄՏԿ>> ՓԲԸ-ի հայցն ընդդեմ <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի՝ թիվ <<№092/GArm/24_4.3_096/04.03.24>> ծածկագրով մրցակցային ընտրության մասնակիցների հայտերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ամբողջությամբ մերժել:

<u>4.Գործի փաստերը.</u>

Հայցվորի ներկայացուցչի կողմից 01.07.2024 թվականին ներկայացված միջնորդությունը՝ հայցից հրաժարվելու վերաբերյալ:

<u>5.Դատարանի իրավական վերլուծությունը</u>.

Դատարանը, քննության առնելով Հայցվորի ներկայացուցչի կողմից 01.07.2024 թվականին ներկայացված՝ հայցից հրաժարվելու վերաբերյալ միջնորդությունը, եկավ հետևյալ եզրահանգման.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձն իրականացնում է իր դատավարական իրավունքները, տնօրինում է դատական պաշտպանության միջոցները և եղանակները սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով հայցվորը (դիմողը) իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու իր պահանջից, փոփոխելու հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը, պատասխանողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն ընդունելու հայցվորի պահանջը, կողմերը կարող են վեճը լուծել հաշտության համաձայնությամբ, սկսել արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց կամ գործը հանձնել

արբիտրաժի լուծմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվել իր պահանջներից մինչև առաջին ատյանի դատարանի կողմից դատաքննությունն ավարտելը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախքան գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելը գործին մասնակցող անձանց բացատրում է պահանջից հրաժարվելու դատավարական հետևանքները, բացառությամբ սույն օրենսգրքի 183-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝ հայցվորը կամ դիմողը հրաժարվել է պահանջից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին առաջին ատյանի դատարանը կայացնում է որոշում, բացառությամբ սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե հայցվորը դատական նիստից դուրս ներկայացնում է պահանջներից հրաժարվելու մասին գրավոր միջնորդություն, ապա առաջին ատյանի դատարանը միջնորդությունն ստանալու պահից տասնօրյա ժամկետում հրավիրում է դատական նիստ՝ պահանջներից հրաժարվելու մասին միջնորդությունը և դատական ծախսերի բաշխման հարցերը քննելու նպատակով: Եթե հայցվորը նիստի ժամանակ պնդում է պահանջներից հրաժարվելու իր միջնորդությունը կամ պատշաճ տեղեկացված լինելու պայմաններում չի ներկայանում դատական նիստին, ապա առաջին ատյանի դատարանը որոշում է կայացնում գործի վարույթը կարճելու մասին:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգը չի կիրառվում այն դեպքերում, երբ պահանջներից հրաժարվելու միջնորդությունը ներկայացնում է իրավաբանական անձը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ որպես ներկայացուցիչ փաստաբան ունեցող ֆիզիկական անձը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցից հրաժարումը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջից և իրավունքի պաշտպանության դատավարական միջոցից անվերապահորեն, առանց որևէ պայմանի հրաժարումն է: Հայցից հրաժարումը հայցվորի միակողմանի տնօրինչական գործողություն է, որը կարող է տեղի ունենալ տարբեր նկատառումներով: Դատարանը չպետք է անդրադառնա հայցից հրաժարվելու պատճառների գնահատմանը, սակայն պարտավոր է հայցվորին

պարզաբանել կատարվող գործողության իմաստն ու նշանակությունը և համոզվել, որ հայցից հրաժարումը վերջինիս ազատ կամքի արտահայտությունն է և զերծ է այլ անձանց հարկադրանքից (տե՛ս ըստ հայցի Յուրիկկ և Աղունիկ Փիլոյանների ընդդեմ Սիրանուշ Փիլոյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին և Սիրանուշ Փիլոյանի հայցի ընդդեմ Յուրիկ և Աղունիկ Փիլոյանների, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ Երևանի քաղաքապետարանի՝ բնակարանից բաժինը ընեղենով առանձնացնելու, դրա անհնարինության դեպքում գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարն ընդհանուր սեփականության մասնակիցների միջև բաժիններին համաչափ բաշխելու պահանջների մասին Վճռաբեկ դատարանի 19.10.2012 թվականի թիվ ԵԿԴ/0462/02/08 որոշումը):

Տվյալ դեպքում, Հայցվորի ներկայացուցիչը, օժտված լինելով հայցից հրաժարվելու լիազորությամբ, 01.07.2024 թվականին միջնորդություն է ներկայացրել հայցից հրաժարվելու վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա Դատարանն արձանագրում է, որ Հայցվորի ներկայացուցիչը Պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջից և իրավունքի պաշտպանության դատավարական միջոցից անվերապահորեն, առանց որևէ պայմանի հրաժարվել է, որպիսի պարագայում սույն քաղաքացիական գործի վարույթն ենթակա է կարճման՝ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով:

<u>6.Դատական ծախսեր.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման և հայցի ապահովման միջոցների վերացման հարցերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են պետական տուրքի գումարից:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայցորի կողմից նախապես վճարվել է հայցադիմումի համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը և ներկայացվել է հայցից հրաժարվելու վերաբերյալ միջնորդություն, հետևաբար քաղաքացիական գործի վարույթը կարճման ենթակա լինելու պարագայում, Դատարանը, ելնելով ՀՀ

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի տրամաբանությունից, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

7.Եզրափակիչ մաս.

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 182-րդ, 183-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, հոդվածներով, 361-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 362-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի <<ՄՏԿ>> ՓԲԸ-ի ընդդեմ <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի՝ <<№092/GArm/24_4.3_096/04.03.24>> ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների հայտերը տրամադրել պարտավորեցնելու պահանջի մասին, կարճել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072
Date: 2024.07.10 11:55:06 AMST **Սարգիս Երիցյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am